

## ՀՈԳՈՒ ԵՒ ՀԾՆԴԻԵՐՉԵԸՆԼ ԿԵԸՆՔԻ ՄԸՍԻՆ

---

Մարդը տարբերում է կենդանիներից նաև՝ նրանով, որ սա հոգի, իսկ նրանք միայն շունչ ունին։ Մարդու հոգին մի լուսաւոր բան է, որ բնակւում է մարդու ձախ կողմում։ Մեռնելիս հոգին դուրս է գալիս բերանից, եթէ արդար է՝ աղաւնու, իսկ եթէ մեղաւոր՝ սև թռչունի նմանութեամբ։ Մի պառաւ պատմում էր, թէ մի ծառի տակ իւր հիւանդ թոռը խնամելիս, ննջում է և տեսնում մի աղաւնի, որ երեխալիք բերանից դուրս է գալիս և կանգնում ծառի վրայ։ Արթնանարով նա գտնում է իւր թոռանը՝ մեռած։ Բոլոր երեխաների հոգիները արդար են, իսկ չափահասներինը՝ մեծ մասով մեղաւոր։

Հոգին բերանից դուրս գալուց յետոյ մինչև ալգը կատարելը սաւառնում է դիակի շուրջը և երբ միւս օրը վաղ առաւտեան տան մեծը գալիս երեք անգամ «վար» է բղաւում, ապահով կերպով սաւառնում է դէպի երկինք։ Ալտեղ բոլորը թռչունների կերպարանքով մնում են՝ արդարները՝ մի ծաղկալից, ծառազարդ ալգում, մեղաւորները՝ մի մթին տեղ, իսկ ոչ արդար, ոչ մեղաւորները՝ արդարների յետեւը։ Ալսաեղից նրանք հսկում են իրենց գերեզմանների վրայ, շատ անգամ ալցելում են իրենց ազգականներին, երեւում են նրանց երազների մէջ։ Նսաւակատեաց, մեռելոց օրեւը իջնում են իրենց գերեզմանների վրայ և սպասում, որ իրենց ազգականները գան, գերեզմանները օրհնել տան։ Եւ եթէ օրհնել են տալիս, իրենք ուրախացած, օրհնում են օրհնել տուողներին և սաւառնում երկինք, իսկ եթէ չեն օրհնել տալիս, տխուր տրասում, ազգականներին անիծելով բարձրանում են։

Երբեմն էլ պատահում է, որ հոգին գեռ մարդու կենդանութեան ժամանակ թողնում է մարմինը և ինքը գնում։

Այդ թափառման միջոցին մարմինը բոլորովին անզգալ ընկած մնում է, մինչև որ հոգին նորից վերադառնում է: Այսպէս մի անգամ Քառասնի գիւղացի Աղաջանը գիշերը գնում է եկեղեցի և գրկելով որդու դագաղը, երկար ժամանակ լաց է լինում և անզգալացած ընկնում վայր: Երբ մի երկու օրից զգաստանում է, պատմում է թէ ինչպէս իւր որդու հոգու հետ միասին ինքն էլ բարձրացել է երկինք, տեսել դրախտը, խօսել Աստուածութեան հետ և ալլն:

Այստեղ, այս երկնալին կալեանում հոգիները անհամբերսւթեամբ սպասում են վերջին դատաստանին, երբ Քրիստոս կը գալ և Դաբրիէլ հրեշտակապետի փողով բոլոր ննջեցեալները յարութիւն կ'առնեն: Այդ ժամանակ կը կախեն արդարութեան կշիռը և բարի ու չար հրեշտակները, որոնք մարդու կենդանութեան ժամանակ նստած բարին՝ աջ, չարը ձախ ուսին, գրում էին նրա գործերը, կը հանեն իրենց մատեանների միջից բարին՝ բարութեան, իսկ չարը՝ չարութեան գործերը և կը զնեն կշոփ նժարների մէջ: Եթէ բարութիւնը կշռէ, մարդը կանցնի Քրիստոսի աջ կողմը, իսկ եթէ չարութիւնը՝ ձախ: Յետու արդէն աջակողմեանները դրախտ, իսկ ձախակողմեանները դժոխք կերթան:

Դրախտը մի հրաշալի ալգի է, լի մշտագալար ծառերով, անուշահոտ ծաղիկներով, քաղցրահամ աղբիւներով և բիւրաւոր գեղեցիկ թռչուններով:

Իսկ դժոխքը մի մութ խոր անգունդ է, ուր թռնիքներից, խարոյկներից, կուպը կարասներից ահագին հուր է բարձրանում և տանջում երկաթեալ տրեխներ հագած մեղաւոր մարդկանց: